600.0175.29.05.19

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՈՐՈՇՈՒՄ

29 մայիսի 2019 թվականի №175Ա
քաղ. Երևան

### «ՍՏԵՓԶՈՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվությունները, այլ տեղեկատվությունը և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով,

բ) Հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 26-ի «Էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց ֆինանսական հաշվետվության ձևերը և դրանց ներկայացման կարգը հաստատելու և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N103Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն՝ էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց կողմից ֆինանսական հաշվետվությունների (այսուհետ՝ Հաշվետվություններ) ներկայացման ժամկետը մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ն է, սակայն «ՍՏԵՓԶՈՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2018 թվականի արդյունքներով Հաշվետվությունները Հանձնաժողով է ներկայացրել 2019 թվականի մայիսի 15-ին,

գ) Հանձնաժողովը Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2019 թվականի մայիսի 2-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2019 թվականի մայիսի 2-ի ՈԱԲ-900Ֆ գրությամբ,

դ) Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում որևէ հիմնավորում կամ փաստարկ չի ներկայացրել,

ե) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված ժամկետը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
29 մայիսի 2019թ.